ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 – 2016թթ.

«Ապավեն համայնքներին» Բարեգործական
Հասարակական Կազմակերպություն

ԵՐԵՎԱՆ– 2013թ.

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3

Ռազմավարությանանհրաժեշտությունընենախադրյալները 4

Կազմակերպության առաքելությունը 5

Կազմակերպության տեսլականը 5

Կազմակերպության գլխավոր արժեքները 5

Ռազմավարության հիմնական նպատակային ուղղությունները և գերակա խնդիրները 6

Ռազմավարության խնդիրների իրականացման հիմնական մոտեցումները (մեթոդները, միջոցները) 6

Ռազմավարության իրականացման կազմակերպական կարողությունները և ռեսուրսները 11

Մշտադիտարկումը և գնահատումը (ՄնԳ) 12

Հաղորդակցությունը և լուսաբանումը 13

Ռազմավարության իրականացման ժամանակագրական ուրվագիծ 13

Հավելված 1. - Նոր ռազմավարության իրականացման առումով «Ապավեն համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպության կարողությունների (SWOT) վերլուծություն 14

Հավելված 2. - Մասնակից կողմերի՝ գործընկերների և դոնորների ներգրավում 17

Հավելված 3. - Ռազմավարության իրականացման ժամանակագրական ուրվագիծ 18

Հապավումների ցանկ

ԱԱՊ – առողջության առաջնային պահպանում

ԱԻՆ - Արտակարգ իրավիճակների նախարարություն

ԱՀԿ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ԱՄՆ ՄԶԳ – ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն

ԱՆ - Առողջապահության նախարարություն

ԱՌՆ – աղետների ռիսկերի նվազեցում

ԱՌՆԱՊ - Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ

ԵԿՄԱ - Երևանի կանանց միջազգային ասոցիացիա

ԲՀԿ -բարեգործական հասարակական կազմակերպություն

ԲՄԿ – բուժակ-մանկաբարձական կետ

ԸԻԿՀ- Ընդդեմ Իրավական Կամայականության Հիմնադրամ

ԾԻԳ – Ծրագրերի իրականացման գրասենյակ

ԿՓՀ – Կլիմայի փոփոխություններին հարմարվողականություն

ՀԵԿԱ- Հայաստանի Երիտասարդ Կանանց Ասոցիացիա

ՀԿ – Հասարակական կազմակերպություն

ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն

ՄՆՄԱՊ – մոր և մանկան առողջության պահպանում

ՄՆԳ – մշտադիտարկում և գնահատում

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ռազմավարության անհրաժեշտությունը և նախադրյալները

«Ապավեն Համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպությունը (ԲՀԿ) հիմնադրվել 1999թ.-ի նոյեմբերին որպես իր անդամների շահերի ընդհանրության եւ կամավորության սկզբունքի հիման վրա հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված հասարակական կազմակերպություն: Կազմակերպության առաքելությունն է աջակցել համայնքների զարգացմանը՝ նպատակ ունենալով հաղթահարել աղքատությունը և անհավասարությունը Հայաստանում:

Իր գոյության 14 տարիների ընթացքում կազմակերպությունն ակտիվ գործունեություն է ծավալել թիրախային համայնքներում կենսապահովման, նյութական և բարոյական աջակցության, բնակչության կենսամակարդակի բարձրացման ոլորտներում: Կազմակերպությունը մի շարք ծրագրեր է իրականացրել, որոնք,մասնավորապես, ուղղված են եղել.

- Սոցիալապես անապահով խավին նյութական և բարոյական աջակցություն ցուցաբերելուն՝անկախ նրանց ազգությունից, սեռից, դավանանքից և հավատքից;
- ջրամատակարարման, կոյուղու, առողջապահական, կրթական, մասնագիտական ուսուցման համակարգերից և այլ հասարակական ծառայություններից օգտվելու հարցում կարիքավոր մարդկանց աջակցելուն;
- բնական և մարդածին աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանը նպաստող աշխատանքներ իրականացնելուն;
- սոցիալապես անապահով և կարիքավոր մարդկանց համար կայուն եկամուտների աղբյուրների ստեղծմանը;
- վերը նշված խնդիրների իրականացման համար բարեգործական այլ կազմակերպությունների և անհատների ջանքերի համախմբմանը:

Ի նկատի ունենալով կազմակերպության նախորդ՝ 2011-2013 թ.թ ռազմավարական պլանի ժամկետների ավարտը, և հաշվի առնելով կազմակերպության առաքելության շրջանակում դիտարկվող հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումները, հանրային առաջնահերթ կարիքների և դրանց բավարարման հնարավորությունների փոփոխությունները, ներկայում անհրաժեշտություն է առաջացել մշակել կազմակերպության գործունեության և զարգացման նոր միջնաժամկետ ռազմավարություն:

Առաջիկա երեք տարիների համար «Ապավեն Համայնքներին» ԲՀԿ գործունեության առաջնահերթ ոլորտների և խնդիրների քննարկման նպատակով 2013 թ. նոյեմբերին Երևանում հրավիրվել է երկօրյա աշխատաժողով «Ապավեն Համայնքներին» ԲՀԿ անդամների, գործընկերների, համագործակցող և

ներգրավված շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ ուրվագծվել են նոր ռազմավարության հիմնական դրույթներն ու մոտեցումները:

Սույն ռազմավարությունը ներառում է նաև վերոհիշյալ աշխատաժողովի քննարկումների արդյունքում ընդհանուր առմամբ համաձայնեցված սկզբունքները, դրույթները և մոտեցումները, ինչը, մեր կարծիքով, բարձրացնում է ռազմավարության հաջող կենսագործման հավանականությունը:

Կազմակերպության առաքելությունը

«Ապավեն Համայնքներին» ԲՀԿ առաքելությունն է աջակցել համայնքների կայուն/շարունակական զարգացմանը՝ նպատակ ունենալով նպաստել Հայաստանում աղքատության և անհավասարության նվազեցմանը:

Կազմակերպության տեսլականը

Իր առաքելության կյանքի կոչման լույսի ներքո, «Ապավեն Համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպությունը տեսանելի հեռանկարում ձգտում է լինել փոփոխության արդյունավետ գործակալ՝Հայաստանում բարեկեցիկ, առողջ, ապահով և պատասխանատու համայնքների ձևավորմանը և կայացմանն աջակցող առաջատար, վստահելի և ճանաչված կազմակերպություն:

Կազմակերպության գլխավոր արժեքները

Որպես իր առաքելության և տեսլականի իրագործման հիմնական գրավական, «Ապավեն համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպության անդամները որդեգրել և պահպանում են հավատամքի, կազմակերպական մշակույթի և վարքի այնպիսի գերակայություններ, ինչպիսիք են արհեստավարժությունը, օրինականությունը, սկզբունքայնությունը, նպատակասլացությունը և նվիրվածությունը գործին, օպերատիվությունը, պարտաճանաչությունը, իրատեսությունը և թափանցիկությունը գործընկերային փոխհարաբերություններում:

Ռազմավարության հիմնական նպատակային ուղղությունները և գերակա խնդիրները

Կազմակերպության առաքելությամբ սահմանված՝ համայնքների կայուն և շարունակական զարգացմանն աջակցելու նպատակով «Ապավեն Համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպությունը առաջիկա երեք տարիների ընթացքում գործունեություն կծավալի հետևյալ ***երկու հիմնական նպատակային ուղղություններով՝ դրանցում ներառելով ընդհանուր առմամբ հինգ գերակա խնդիրներ***, որոնք են՝.

1. **Հանրային առողջապահություն**,

   Այդ շրջանակում ներառելով աջակցություն հետևյալ երեք գերակա խնդիրների լուծման համար.

   1.1 Հանրային առողջապահություն արտակարգ իրավիճակներում
   1.2 Որակյալ և մատչելի առողջապահական ծառայություններ համայնքների բնակչությանը
   1.3 Առողջապահական խնդիրների (ներառյալ քաղաքականության) հետազոտություններ և քարոզչություն

2. **Համայնքների ճկուն կենսապահովում**,

   այդ շրջանակում ներառելով աջակցություն հետևյալ երկու գերակա խնդիրների լուծման համար.

   2.1 Աղետներին և կլիմայի փոփոխությունների հետևանքներին դիմակայելու առումով համայնքների պատրաստվածության բարձրացում
   2.2 Համայնքների պլանային (ընթացիկ) կենսապահովման ծրագրեր

Ռազմավարության խնդիրների իրականացման հիմնական մոտեցումները (մեթոդները, միջոցները)

1. **Հանրային առողջապահության** ոլորտում դիտարկվող գերակա խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով ծրագրվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

*Խնդիր 1.1-**Հանրային առողջապահություն արտակարգ իրավիճակներում***

Նախատեսվող աշխատանքներ.

- Հնարավոր արտակարգ իրավիճակներում առավել հաճախ առաջացող առողջապահական խնդիրներին արձագանքելու՝ համայնքների բնակչության պատրաստվածությունը բարձրացնող աշխատանքներ, մասնավորապես, բնակչության կրթման և գործնական ուսուցման միջոցառումներ հետևյալ խնդիրների վերաբերյալ.
  - արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնության ցուցաբերում,
  - արտակարգ իրավիճակներում համաճարակային վտանգների կանխում,
  - արտակարգ իրավիճակներում վերարտադրողական առողջության կարիքներին արձագանքում:
- Արտակարգ իրավիճակներում ծագած առողջապահական խնդիրների շուրջ համայնքների մոբիլիզացման աշխատանքներ, մասնավորապես՝
  - Աղետների ժամանակ առաջին անհետաձգելի բուժօգնության կազմակերպում,
  - Աղետների ժամանակ վերարտադրողական առողջության արտակարգ կարիքներին արձագանքման միջոցառումների կազմակերպում,
  - Աղետների ժամանակ համաճարակային վտանգների և վարակիչ հիվանդությունների կանխարգելման արտակարգ միջոցառումների կազմակերպում:
  - Աղետների ժամանակ խմելու ջրի ապահովման և հիգիենիկ-հակահամաճարակային միջոցառումների կազմակերպում:
- Արտակարգ իրավիճակներում ծագող հանրային առողջապահական խնդիրների վերաբերյալ համայնքների բնակչության իրազեկվածությունը բարձրացնող աշխատանքներ:

<u>Խնդիր 1.2</u> Որակյալ և մատչելի առողջապահական ծառայություններ համայնքների բնակչությանը

Նախատեսվող աշխատանքներ.

- Համայնքների բնակչությանը առողջապահական ծառայություններ մատուցող բուժհաստատություններում (հիմնականում՝ ԲՄԿ-ներում, ԱԱՊ և ՄԼՄԱՊ կենտրոններում)՝
  - կադրային ապահովվածության բարելավմանն աջակցող միջոցառումներ,
  - բուժաշխատողների մասնագիտական որակավորման բարձրացման կարիքների բավարարմանն աջակցող միջոցառումներ,
  - ղեկավարների կառավարման հմտությունների բարելավմանն աջակցող միջոցառումներ,
  - նյութա-տեխնիկական հագեցվածության բարելավմանն աջակցող միջոցառումներ,

- բուժօգնության որակի չափորոշիչների ներդրմանն աջակցող միջոցառումներ և դրանց կիրառման մոնիտորինգ,
- բնակչության սոցիալապես անապահով խմբերի համար բուժծառայությունների և դեղորայքային ապահովման մատչելիության բարձրացմանն աջակցող միջոցառումներ,
- բնակչության սոցիալապես անապահով խմբերին հասցեական բուժօգնության, այդ թվում՝ վերականգնողական բուժծառայությունների տրամադրմանն աջակցող միջոցառումներ,
- հիվանդությունների կանխարգելման աշխատանքների բարելավմանն աջակցող միջոցառումներ։

*<u>Խնդիր 1.3</u> - **Առողջապահական խնդիրների (ներառյալ քաղաքականության) հետազոտություններ և քարոզչություն***

Նախատեսվող աշխատանքներ.

- Բնակչության առողջապահական կրթման և իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝
  - Առողջ ապրելակերպի քարոզչությանն ու խթանմանն ուղղված միջոցառումներ,
  - Առողջապահական իրավունքների վերաբերյալ բնակչության իրազեկման և այդ իրավունքների պաշտպանության միջոցառումներ,
  - Բնակչության առողջապահական կրթման և իրազեկման նպատակով ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների կիրառումը խթանող միջոցառումներ։
- Առողջապահական քաղաքականության, օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորման, արդյունավետ կառավարման, ֆինանսավորման, չափորոշչավորման, տեղեկատվության համակարգերի, բժշկական ծառայությունների մատուցման, դեղաքաղաքականության և այլ ոլորտներում բարեփոխումների կարիքների գնահատման հետազոտությունների իրականացում և դրանց արդիական լուծումների ներդրման վերաբերյալ քարոզչություն՝ որոշում կայացնողների և հանրության շրջանում։
- Բուժաշխատողների իրավական և սոցիալական պաշտպանվածության բարելավմանն ուղղված քարոզչական աշխատանքներ։

Համայնքային առողջության առաջնային պահպանման ծրագիր

2. **Համայնքների ճկուն կենսապահովման** ոլորտում դիտարկվող գերակա խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով ծրագրվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

Խնդիր 2.1 -***Աղետներին և կլիմայի փոփոխությունների հետևանքներին դիմակայելու առումով համայնքների պատրաստվածության բարձրացում***

Հնարավոր արտակարգ իրավիճակներում աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) և կլիմայի փոփոխություններին հարմարվողականության (ԿՓՀ) խնդիրների շուրջ համայնքների մոբիլիզացման նպատակով նախատեսվող աշխատանքները կներառեն, մասնավորապես, հետևյալը.

- Աղետներին դիմակայելու առումով համայնքների կարողությունների, առկա ռեսուրսների, ուժեղ և թույլ կողմերի գնահատում
- Հնարավոր արտակարգ իրավիճակներում բնակչության առանձին խմբերի հատուկ կարիքների կանխատեսում, գնահատում, դրանց արձագանքման պլանավորում նայդ մասին բնակչության ուսուցում
- Հնարավոր աղետների ժամանակ համայնքների բնակչության իրազեկման պլանավորում և այդ պլանի իրականացմանն աջակցող միջոցառումներ
- Համայնքներում աղետների արձագանքման մասնագետների պատրաստման և աղետներին արձագանքող խմբերի ձևավորմանը, վերազինմանն ու ուժեղացմանն աջակցող միջոցառումներ
- Աղետների ռիսկերի նվազեցման (ԱՌՆ) մարզային թիմերի հզորացման և աղետների ռիսկերին արձագանքման համայնքային խմբերի հետ նրանց համագործակցության ուժեղացման միջոցառումներ
- Աղետների ռիսկերի նվազեցման վերաբերյալ համայնքների բնակչության ուսուցում և այդ գիտելիքների պրակտիկ կիրառումն ամրապնդող միջոցառումներ

- Ընտանիքներում արտակարգ իրավիճակներին պատրաստվածության բարձրացման միջոցառումներ, մասնավորապես, ԱՌՆ վերաբերյալ երեխաներին գիտելիքների տրամադրում, ընտանիքների տարհանման պլանների մշակում և ուսուցանում:
- Արտակարգ իրավիճակներում բնակչության հոգեբանական աջակցության պլանավորման և կազմակերպման աշխատանքներ
- Համայնքներում աղետների կանխարգելման փոքրածավալ շինարարական աշխատանքներ
- Մասնակցություն ազգային մակարդակում ԱՌՆ հարցերի առաջադրման և լոբինգի աշխատանքներին
- ԱՌՆ և ԿՓՀ առումներով հանրային իրազեկման և շահերի պաշտպանության աշխատանքներ՝ ԱՌՆ ազգային պլատֆորմի շրջանակներում տարբեր թեմատիկ խմբերում ներգրավման և քարոզչության ճանապարհով:

Աղետների ռիսկերի մասնակցային նվազեցման ծրագիր

<u>Խնդիր 2.2</u> - Համայնքների պլանային կենսապահովման ծրագրեր

Նախատեսվող աշխատանքներ.

- Համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը, մասնավորապես, համայնքներում խմելու և ոռոգման ջրով ապահովելուն նպատակաուղղված փոքրածավալ աշխատանքներ
- Բնակչության զբաղվածության բարելավման, մասնավորապես, գյուղատնտեսական փոքր արտադրությունների կազմակերպման, գյուղական համայնքներում տուրիզմի և մշակույթի զարգացման միջոցառումներ
- Համայնքներում տեղեկատվության ժամանակակից միջոցների հասանելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ
- Համայնքների բնապահպանական կարիքների գնահատման և համապատասխան արձագանքման միջոցառումներ

Ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր

«Ապավեն համայնքներին» ԲՀԿ-ն կարևորում է համայնքներում քաղաքացիական հասարակության ակտիվացման աշխատանքները և ռազմավարական բոլոր ուղղություններում նախատեսում է քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացման և բնակչության շահերի պաշտպանության միջոցառումներ:

Ռազմավարության իրականացման կազմակերպական կարողությունները և ռեսուրսները

Նոր ռազմավարության իրականացման առումով «Ապավեն համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպության կարողությունների (SWOT) վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել կազմակերպության որոշակի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև կազմակերպությունից դուրս առկա հնարավորություններն ու վտանգները*(տես Հավելված 1)*, որոնք կարող են այս կամ այն չափով ազդել սույն ռազմավարության իրականացման ընթացքի վրա։

Այդ առումով կարևոր է դիտվում կազմակերպության աշխատակազմի կողմից այնպիսի անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելը, որոնք հնարավորություն կտան առավել արդյունավետ օգտագործել այդ գործոնների դրական ազդեցությունները և հնարավորինս չեզոքացնել կամ նվազեցնել բացասական ազդեցությունները։

Ֆինանսական ռեսուրսներ

Ռազմավարությամբ նախատեսվող գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են լինելու.

- Կազմակերպության անդամներից հավաքագրվող անդամավճարները և
- Դոնոր կազմակերպություններից ակնկալվող դրամաշնորհները։

Նյութա-տեխնիկական ռեսուրսներ

Կազմակերպությունն ունի համագործակցող հինգ գրասենյակներ Երևանում և հանրապետության չորս մարզերում (Տավուշի մարզի Իջևան, Լոռու մարզի Ստեփանավան, Սյունիքի մարզի Կապան և Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքներում)։

Կազմակերպության նյութատեխնիկական ներկայիս հագեցվածությունն ընդհանուր առմամբ գնահատվում է բավարար։ Այդուհանդերձ, հաշվի առնելով գործունեության ընդլայնման նախատեսվող հնարավորությունները, կազմակերպությունն ունի գրասենյակային և համակարգչային տեխնիկայի լրացուցիչ հագեցման և տրանսպորտային միջոցների բարելավման/թարմացման կարիք։

Մարդկային ռեսուրսներ

Սույն ռազմավարությամբ նախատեսվող գործունեության ոլորտները և ծավալները նթադրում են կազմակերպության աշխատակազմի համալրման անհրաժեշտություն, այդ թվում՝

ա). Մշտական աշխատակիցներ.

- Ծրագրի օգնական
- Կենսապահովման հարցերով մասնագետ /փորձագետ

բ). Ժամանակավոր աշխատակիցներ՝խորհրդատուներ.

- հոգեբան
- իրավախորհրդատու
- տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետ
- հանրային կապերի մասնագետ

գ). Կամավորների, ինտերնների ներգրավում

Մասնակից կողմերի՝գործընկերների և դոնորների ներգրավում

Ռազմավարության հիմնական ուղղություններով որոշակի խնդիրների իրականացման գործընթացներում ակնկալվում է մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների ներգրավումը՝ որպես ներդրողներ, դոնորներ և/կամ գործընկեր կազմակերպություններ*(տես Հավելված 2)։*

Մշտադիտարկումը և գնահատումը (ՄԵԳ)

Ռազմավարության իրականացման մշտադիտարկումը և գնահատումը (ՄԵԳ) կիրականացվի հետևյալ պարբերականությամբ.

- *Ընթացիկ ծրագրային* ՄԵԳ-ներ՝ ըստ իրականացվող ծրագրերից և/կամ միջոցառումներից յուրաքանչյուրի համար սահմանված ժամանակացույցերի, ցուցանիշերի և չափորոշիչների։
- Ընդհանուր ռազմավարության *միջանկյալ պլանային* ՄԵԳ՝ տարեկան մեկ անգամ, ռազմավարության առաջին և երկրորդ տարիների ավարտին։
- Ընդհանուր ռազմավարության *ամփոփիչ* ՄԵԳ՝ ռազմավարության ժամկետի վերջին տարվա ավարտին։

Ռազմավարության ընդհանուր առաջընթացի միջանկյալ և ամփոփիչ մշտադիտարկումները և գնահատումները կիրականացվեն հրավիրված անկախ փորձագետների միջոցով։

Հաղորդակցությունը և լուսաբանումը

Ռազմավարության իրագործման ընթացքում կազմակերպության գործունեության լուսաբանումը և հանրության շրջանում այդ մասին տեղեկատվության տարածումը նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական ուղիներով.

- Կազմակերպության ինտերնետային կայքի միջոցով՝ ապահովելով վերջինիս կանոնավոր թարմացումը,
- Քաղաքացիական հասարակության տարբեր ալյանսներում և ցանցերում ներկայացվածության և ակտիվ մասնակցության միջոցով,
- Զանգվածային լրատվամիջոցների հետ ակտիվ՝ նախաձեռնող և հետևողական աշխատանքով,
- Այլ քարոզչական ակցիաների, ցուցահանդեսների, նորարական՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող տեղեկատվական-քարոզչական միջոցառումների և այլ միջոցներով։

Ռազմավարության իրականացման ժամանակագրական ուրվագիծ

Հաշվի առնելով ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման հավանականության և կոնկրետ ժամկետների ճշգրիտ կանխատեսման դժվարությունները, ռազմավարության իրականացման ժամանակացույցը նախատեսվել է ընդհանուր ուրվագծի տեսքով՝ ի նկատի ունենալով ռեսուրսների հայթայթման հավանականության մոտավոր կանխատեսումները *(տես Հավելված 3)*։

Հավելված 1. - Նոր ռազմավարության իրականացման առումով «Ապավեն համայնքներին» բարեգործական հասարակական կազմակերպության կարողությունների (SWOT) վերլուծություն



<u>Ծանոթություն.</u> – Գործոնների դիմաց նշված թվերը ցույց են տալիս, թե վերլուծության մասնակիցների կարծիքով որքան մեծ է տվյալ գործոնի հավանական ազդեցությունը ռազմավարության իրականացման վրա։ Գնահատումը կատարվել է 10-բալանոց սանդղակով՝ և՛ դրական (ուժեղ կողմերի և հնարավորությունների տեսանկյունից), և՛ բացասական (թույլ կողմերի և վտանգների տեսանկյունից) ազդեցությունների առումներով։ 1բալը=նվազագույն ազդեցություն, 10 բալը= առավելագույն ազդեցություն։

1. <u>Ներկազմակերպական՝</u>

1.1 Ուժեղ կողմերը

Ու1 –Կազմակերպության փորձը - 9
Ու2 –Աշխատակազմի արհեստավաժությունը – 9
Ու3 –Նյութական և մարդկային ռեսուրսները – 7
Ու4 –Ճանաչվածությունը հանրապետության մարզերում – 6
Ու5 –Գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը – 7
Ու6 –Ներկազմակերպական մշակույթ (OXFAM-ի աշխատառճի որդեգրում, թափանցիկություն, հաշվետվականություն, պատասխանատվություն, հաղորդակցություն, սովորելու պատրաստակամություն, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում) – 10
Ու7 –Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառումը – 6

1.2 Թույլ կողմերը

Թ1 –Նյութական և մարդկային ռեսուրսները - 3
Թ2 –Գործունեության հանրային լուսաբանումը -7
Թ3 –Ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը– 7
Թ4 –Ֆինանսական անբավարար ինքնաբավությունը – 8
Թ5 –Քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը – 6
Թ6--Կազմակերպության տեղեկատվության, գիտելիքների և փորձի փոխանցման անբավարար հնարավորությունները (կամավորների, երիտասարդ մասնագետների ընդգրկում) – 5
Թ7 –Գործունեության աշխարհագրական ծածկույթի սահմանափակությունը – 5
Թ8 –Աշխատակազմի կարողությունների զարգացման կարիքը - 8

2. <u>Կազմակերպությունից դուրս՝</u>

2.1. Հնարավորությունները

Հ1-Այլ/նոր կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման հնարավորություն– 6
Հ2 –Գործունեության լուսաբանման լավացման հնարավորություն– 6

Հ3 –Աջակցություն համայնքային՝ (ՏԻՄ) և տարածքային կառավարման մարմինների կողմից – 7
Հ4 - Արտաքին/լրացուցիչ ֆինանսավորման հնարավորություններ(OXFAM, USAID, UNFPA, WB PIU) -8
Հ5 –Միջազգային դոնոր կազմակերպությունների՝տեղական ՀԿ-ների հետ անմիջականորեն աշխատելու միտում – 5
Հ6 –Հայկական սփյուռքի աջակցություն – 1
Հ7 –Առցանց ուսուցումների հնարավորություն - 9

2.2. Վտանգները

Վ1-Ծրագրերի շարունակականության ապահովման պայմանների անբավարարություն– 10
Վ2 - Տնտեսական-քաղաքական անկայունություն – 5
Վ3 –Անձնակազմի արտագաղթի վտանգ – 5
Վ4-Արտաքին/լրացուցիչ ֆինանսավորման անբավարարություն և/կամ դադարեցման վտանգ – 5
Վ5 –Օրենսդրական աննպաստ փոփոխությունների հավանականություն – 5
Վ6 –Քաղաքացիական հասարակության պասիվություն - 6

Հավելված 2. - Մասնակից կողմերի՝ գործընկերների և դոնորների ներգրավում

Ռազմավարության հիմնական ուղղություններով որոշակի խնդիրների իրականացման գործընթացներում ենթադրվում և ակնկալվում է հետևյալ **միջազգային դոնոր կազմակերպությունների** ներդրումները.

- OXFAM
- ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
- Ուորլդ Վիժըն
- ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
- ՄԱԿ-ի զարգացման ծրագրեր
- ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
- Համաշխարհային բանկի ԾԻԳ
- DFID/UKAID
- Բիլլ և Մելինդա Գեյթսերի հիմնադրամ
- Ջինիշյան հիշատակի հիմնադրամ
- Գեոթիմ ՓԲԸ
- Հայկական սփյուռքի այլ կազմակերպություններ

Ռազմավարության իրականացման ընթացքում որպես համագործակցող կողմեր նախատեսվում է հետևյալ **տեղական և միջազգային գործընկեր կազմակերպությունների** ներգրավումը.

- «Փրկենք երեխաներին» Հայաստան
- ԱՀԿ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
- ԸԻԿՀ | Ընդդեմ Իրավական Կամայականության Հիմնադրամ
- ՀԵԿԱ | Հայաստանի Երիտասարդ Կանանց Ասոցիացիա
- ԵԿՄԱ / Երևանի կանանց միջազգային ասոցիացիա
- ԱՌՆԱՊ Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ
- Տարածքային կառավարման մարմիններ (ՀՀ մարզպետարաններ)
- Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)
- Առողջապահական կազմակերպություններ
- ՀՀ Առողջապահության նախարարություն (ԱՆ)
- ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (ԱԻՆ)

Հավելված 3. - Ռազմավարության իրականացման ժամանակագրական ուրվագիծ

	Տարիներ	2014				2015				2016			
	Եռամսյակներ	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
1	**Հանրային առողջապահություն**												
1.1	Հանրային առողջապահություն արտակարգ իրավիճակներում												
1.2	Որակյալ և մատչելի առողջապահական ծառայություններ համայնքների բնակչությանը												
1.3	Առողջապահական խնդիրների (ներառյալ քաղաքականության) հետազոտություններ և քարոզչություն												
2	**Համայնքների ճկունկենսապահովում**												
2.1	Աղետներին և կլիմայի փոփոխությունների հետևանքներինդիմակայելու առումով համայնքների պատրաստվածության աջակցում												
2.2	Համայնքների պլանային կենսապահովման ծրագրեր												
	Եռամսյակներ	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
	Տարիներ	2014				2015				2016			

Պլանավորված (մեծ հավանականության) միջոցառումներ

Նախատեսվող (միջին հավանականության) միջոցառումներ՝ կախված ֆոնդահայթայթումից